ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԻՍԱՅԻ ՓԻԹՈՅԱՆ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂԸ, ԲԱՆԿԻՐԸ, ԱՐՎԵՍՏԻ ՀՈՎԱՆԱՎՈՐԸ

ՎԱՐԴԱՆ ԵՍԱՅԱՆ

Հոդվածում ներկայացվում է Փիթոյան ազնվականական տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչ, ձկնարդյունաբերող, նավթարդյունաբերող, բանկիր, նաև հարգված հասարակական գործիչ Իսայի Փիթոյանի գործունեությունը, ով եղել է նաև բարեգործ: Նրա հիմնած Արտիստական ընկերությունը դարձավ մշակույթի աննախադեպ կենտրոն Թիֆլիսում՝ իր շուրջը համախմբելով ճանաչված արվեստագետներին և ամբողջ հասարակությանը:

Բանալի բառեր – ձկնարդյունաբերություն, նավթարդյունաբերություն, մասնավոր բանկ, շոգենավային ընկերություն, քաղաքային դումա, արվեստի հովանավոր, թատերական խմբակ, Արտիստական ընկերություն:

Հայ առևտրաարդյունաբերողները XIX դարում-XX դարի սկզբին նշանակալի, շատ ոլորտներում բացառիկ դերակատարություն են ունեցել Այսրկովկասի ֆինանսատնտեսական կյանքում՝ դառնալով առաջամարտիկներ արդյունաբերության շատ ճյուղերում և բանկային ոլորտում: Այստեղ իրենց կարևոր տեղն են զբաղեցրել թիֆլիսահայ վաճառականներն ու արդյունաբերողները, որոնցից էին Փիթոյանների (Փիթոևներ) ազնվականական տոհմի ներկայացուցիչները: Նրանք Թիֆլիսի նահանգում և Այսրկովկասում ոչ միայն հայտնի վաճառականներ, արդյունաբերողներ և բանկիրներ էին, այլև արվեստասեր ու արվեստի հովանավորներ՝ մեծապես նպաստելով Կովկասում թատերական և երաժշտական արվեստի զարգացմանը:

Փիթոյանների գերդաստանի ամենանշանավոր ներկայացուցիչը, ընտանիքի բիզնեսի ղեկավարը Իսայի Եգորի Փիթոյանն էր (1844-1904թթ.), ով նաև ընտանիքի անդամների մեջ արվեստի հանդեպ մեծ սիրո, առանձնահատուկ վերաբերմունքի սերմանողն էր, արվեստի համար միջոցներ չխնայելու և անսահման նվիրվածության օրինակ: Նրա հայրը՝ Եգոր Փիթոյանը, ստացել էր ժառանգական ազնվականի տիտղոս՝ Ղրիմի պատերազմի ժամանակ (1853-1856թթ.) ռուսական բանակին մեծ քանակությամբ մթերք և հագուստ մատակարարելու համար: XIX դարի առաջին կեսի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ բազմաթիվ վաճառականներ սկսեցին

զբաղվել կապալառությամբ: Ջորքին մթերք և այլ ապրանքներ մատակարարելը, պետական հաստատությունների համար շինություններ կառուցելը, բեռների տեղափոխությունը և այլն, կատարվում էին կապալների եղանակով, որ ռուսական բանակի հրամանատարությունն աճուրդով հանձնում էր մասնավոր անձանց: Հանդես եկան հայ կապալառուներ, որոնք կապալով վերցրել էին տնտեսության բոլոր ճյուղերը, նաև տուրքերի գանձումը: Եգոր Փիթոյանը կապալառությամբ զբաղվող հայ վաճառականներից էր, ում աշխատանքը գնահատվել էր ռուսական կառավարության և հրամանատարության կողմից: 1854թ. օգոստոսի 12-ին կապալների աճուրդին Թիֆլիսի նահանգից հրավիրված «կապիտալիստների» թվում հիշատակվում է նաև «նահանգային քարտուղար Եգոր Փիթոևը»[1]: Նա ընդգրկված էր 1859թ. հունիսի 7-ի բարձրագույն հրամանով կազմված 79 տոհմական առաջին կարգի քաղաքացիների (մոքալաքների) ցուցակում, որոնք ազատված էին մարմնական պատժից[2]:

Եգոր Փիթոյանն ուներ վեց զավակ՝ հինգ որդի և մեկ դուստր: Նրա չորս որդիները կրթություն են ստացել Ֆրանսիայում, բայց Փարիզից վերադարձավ միայն Իվանը: Հորն օգնելու համար արտասահման ուսանելու չմեկնեց ավագ որդին՝ Իսային, որը շարունակեց հոր գործը: Եգոր Փիթոյանի մահից հետո ընտանիքի որոշմամբ Իսային գլխավորեց «Ի.Ե. Փիթոև և ընկ.» առևտրային ֆիրման: Նրան հաջողվեց զգալիորեն ընդլայնել ընտանեկան բիզնեսը՝ սկզբում զբաղվելով կապալառությամբ և ձկնարդյունաբերությամբ, այնուհետև նավթարդյունաբերությամբ և բանկային գործունեությամբ:

Հայ վաճառականներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել Քուռ գետի ողջ ձկնարդյունաբերությունը, որը շահագործում էին կապալով: 1840-70-ական թթ. Քռի գետաբերանի Սաղիանիի ձկնորսարանների կապալառուներն էին տարբեր տարիներին Թիֆլիսի քաղաքագլուխներ Հ.Միրիմանյանը (1851-1852թթ.), Ա.Սվեշնիկյանը (1853-1856թթ.), Վ.Արշակունին (1858-1860թթ.), արդյունաբերողներ Հ.Միրզոյանը, Հ.Անանյանը և ուրիշներ: 1879թ.-ից Ի.Փիթոյանը Սաղիանիում գնում է ձկնորսատեղիներ, իր ձեռքն է վերցնում ձկնարդյունաբերությունը, արդյունահանում թառափածուկ և արտադրում սև խավիար: Տարեկան արդյունահանում էր 400 փութ թանկարժեք ձկնատեսակներ (թա-

[1] Акты собранные Кавказскою археографическою коммиссиею (АКАК), т. XI, ч. II, Тифлис, 1888, док. 647, стр. 624.

[2] Акты собранные Кавказскою археографическою коммиссиею (АКАК), т. X, ч. I, Тифлис, 1885, док. 143, стр. 227.

ռափ, սաղմոն)[3]: Փիթոյաններն ունեին մասնավոր բանկ[4], որը Թիֆլիսում առավել հայտնի մասնավոր բանկային գրասենյակներից էր:

Իսայի Փիթոյանը հաջողակ ձեռնարկատեր էր նաև նավթարդյունաբերության մեջ: 1880-ական թթ. նա հիմնեց «Ի.Ե.Փիթոև և ընկ.» նավթարդյունաբերական և առևտրային բաժնետիրական ընկերությունը, որի ձեռնարկությունները մեքենայացված էին, ունեին էլեկտրակայան, շոգիով և նավթով աշխատող շարժիչ[5]: Այդ բաժնետիրական ընկերության վարչության անդամ ու ամենախոշոր բաժնետերն էր Ալեքսանդր Մանթաշյանցը: Ընկերությունն ուներ սեփական նավեր Կասպից ծովում: 1893թ. տվյալներով Ի.Փիթոյանի «Մասիս» շոգենավային ընկերությանն էին պատկանում «Վան», «Մուշ», «Անի», «Սևան», «Մասիս», «Զանգի» նավերը[6]: «Ի. Ե. Փիթոև և ընկ.» բաժնետիրական ընկերությունը գործել է նաև Իսայի Փիթոյանի մահից հետո: Այն մտնում էր 1912թ. Լոնդոնում Ս.Լիանոսյանի ստեղծած «Օյլ» նավթային խոշորագույն կորպորացիայի մեջ[7] և դրա 17 ֆիրմաներից մեկն էր: 1915թ. ընկերությունն արտադրել էր 2,7 մլն փութ նավթ[8]: Փիթոյանները Թիֆլիսի մեծահարուստներից էին և ընդգրկված էին Թիֆլիսի առաջին կարգի տնատերերի, խոշոր հարկ վճարողների ցուցակում[9]: Ի. Փիթոյանի ձեռնարկատիրական գործունեությանը ժամանակի հայտնի հրապարակախոս և գրող Գ.Մ.Թումանովը տվել է հետևյալ գնահատականը. «Նրա գրեթե 30-ամյա արդյունաբերական և առևտրական գործունեությունը միշտ անթերի էր էթիկայի տեսակետից: Եվ դրանով նա տարբերվում էր շատ ձեռնարկատերերից, որոնցից քչերը կարող էին հպարտանալ այդ որակներով»[10]:

---

[3] **Питоева-Лидер К.** Он был страстным к театру как все Питоевы /к 100-летию Николая Питоева/ // «Иные берега», журнал Союз театральных деятелей Российской федерации, Москва, 2009, N 3 (15).

[4] **Исмаилова А.** Банки и банковские учреждения Закавказского края (последняя треть XIX- начало XX века) // Вестник Челябинского государственного университета, 2015, N: 24, стр. 51.

[5] Список фабрик и заводов Российской империи, под ред. В.Е. Варзара. Санкт-Петербург, 1912, стр. 313.

[6] «Արօր»-ի օրացույց 1894թ., Բաքու, 1893, էջ 30, տե՛ս **Դադայան Խ.,** Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920թ.), Երևան, 2006, էջ 44:

[7] **Դադայան Խ**., նշվ. աշխ., էջ 37:

[8] Նույն տեղում, էջ 43:

[9] «Մուրճ», 1890, N: 11:

[10] **Туманов Г.** Характеристики и воспоминания. Кн. 2. Тифлис, 1905, стр. 113.

Ի.Փիթոյանն աչքի էր ընկնում հասարակական ակտիվ գործունեությամբ: Նա Թիֆլիսի քաղաքային դումայի անդամ էր (ձայնավոր, իրավասու): Երիտասարդ, խելացի, եռանդուն ձեռնարկատերը լավ էր հասկանում քաղաքի խնդիրները և հանդես էր գալիս դրանց լուծման բազմաթիվ նախաձեռնություններով: Նա համագործակցում էր քաղաքային դումայի վաճառականական, արդյունաբերական դասի ներկայացուցիչների հետ՝ քաղաքի կառավարման և գործունեության նոր ծրագրերի մշակման ու կյանքի կոչման համար: Ի.Փիթոյանը, օգտագործելով իր հեղինակությունը, կարողացավ միավորել դումայի վաճառականական խավին առաջադեմ երիտասարդների խմբի հետ, որը դարձավ իրական ուժ[11]: Նա քաղաքային դումայում անդամակցում էր բուրժուական ուղղվածության խմբակցությանը, որը կոչվում էր «Դվորցովի» («Дворцовых номеров»): Այդ խմբակն էր, որ Ալեքսանդր Մատինյանցի 12 տարի քաղաքագլուխ լինելու ժամանակ (1879-1891թթ.) մեծապես նպաստեց քաղաքի զարգացմանը, շինարարության և կառուցապատման բազմաթիվ ծրագրերի իրականացմանը (քաղաքի բարեկարգում, ջրամատակարարում, տրամվայ, Մնացականյան կամրջի շինարարություն և այլն), առանց որի չէր արվի դրա մեկ տասներորդ մասը[12]: Այդ խմբակցությունը մշտապես մեծամասնություն էր կազմում քաղաքային դումայում, իսկ ավելի ուշ՝ 1890-ական թթ., դրա ղեկավարներն ու անդամներն էին առևտրաարդյունաբերողներ Կոնստանտին և Հովհաննես Ալիխանյանները, Հովի. Թաիրյանը, բանկիր և արդյունաբերող Հովի. Ծովիանյանը, բանկիր Միքայել Թամամշյանը, 1897-1901թթ. Թիֆլիսի քաղաքագլուխ Գևորգ Եվանգուլյանցը, Աբգար Հովհաննիսյանը և ուրիշներ[13]: Ի.Փիթոյանի տանը հաճախ էին տեղի ունենում Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասուների, հատկապես «Դվորցովի» խմբակի մասնավոր հավաքներ, որտեղ քննարկվում էին քաղաքային տնտեսության բոլոր կարևոր հարցերը: Ի.Փիթոյանը վայելում էր մեծ հեղինակություն, և նրա խոսքը՝ «Իսային ասաց», հաճախ վճռորոշ էր լինում: Շնորհիվ Փիթոյանի խմբակի՝ քաղաքային դումայի իրավասուների մասնավոր հավաքները Թիֆլիսում «քաղաքացիության իրավունք ստացան 20 տարի ավելի շուտ, քան Ռուսաստանի քաղաքներում»[14]:

---

[11] **Гевенян С.** Мой Тифлис // Эчмиадзин, 2002, стр. 92.
[12] **Туманов Г.,** указ. соч., стр. 111.
[13] «Մուրճ», 1897, N 5:
[14] **Туманов Г.**, указ. соч., стр. 106.

Փիթոյանները հայտնի էին արվեստի հանդեպ իրենց անսահման նվիրվածությամբ, որպես արվեստագետներ ու արվեստի հովանավորներ, իսկ Իսայի Փիթոյանը «այն հազվադեպ վաճառականներից էր, որ ամբողջ հոգով սիրահարված էր արվեստին և միջոցներ չէր խնայում դրա համար»[15]: Նա արվեստին նվիրեց «իր կյանքի մեծագույն մասը և իր հարստության մի խոշոր մասը»[16]: Ի.Փիթոյանը գործնական այցերով հաճախ էր լինում Ստավրոպոլում, որտեղ էլ ծանոթացավ իր ապագա կնոջ՝ դերասանուհի Օլգա Ստանիսլավովնա Մարքսի հետ[17]: Օլգայի ծնողները նույնպես դերասաններ էին և դրամատիկական խմբով հյուրախաղերով բազմիցս հանդես են եկել Թիֆլիսում: Ամուսնանալով Օլգա Մարքսի հետ՝ Ի.Փիթոյանն իր տանը հիմնեց թատերական խմբակ, որի անդամները դարձան նաև Օլգայի հոր մահից հետո Թիֆլիս տեղափոխված մայրը, երկու քույրերն ու եղբայրը: Նրանց դերասանական խմբակը բարեգործական ներկայացումներ ու համերգներ էր ունենում, և շատ արագ նրա անդամների թիվը հասավ 70-ի: Ի Փիթոյանի տունը դարձավ արվեստագետների հավաքատեղի: Այստեղ հաճախ էին լինում երաժիշտներ, դերասաններ, նկարիչներ: Նա իր տան բակում կառուցեց թատրոնի փոքր շենք, ստեղծեց բոլոր հարմարությունները դերասանների համար: Ի.Փիթոյանն իր վրա էր վերցրել ներկայացումների ծախսերը, իսկ դերասաններին օգնում էր նյութապես, մեծ հոգածություն ցուցաբերում նրանց հանդեպ: Փիթոյանները ներկայացումներին մասնակից էին դարձնում նաև իրենց միակ դստերը՝ Մարգարիտային:

1887թ. Ի.Փիթոյանը հիմնեց Արտիստական ընկերությունը և դարձավ նրա վարչության նախագահը: Նա ղեկավարում էր գործերը, ընտրում խաղացանկը, դերասաններին, մասնակցում ռեժիսորական աշխատանքներին: Փիթոյանը բաց չէր թողնում ոչ մի ներկայացում, անձամբ էր բացում բեմի վարագույրը և դա անում էր անթաքույց հպարտությամբ[18], հոգում էր բոլոր ծախսերը՝ թույլ չտալով հիշատակել իր անունն ազդագրերում և մամուլում[19]: Արտիստական ընկերության փոքր բեմում բեմադրվեցին «Եվգենի Օնեգին», «Ռիգոլետտո», «Ֆաուստ», «Սևիլյան սափրիչ» և այլ օպերաներ: Դիրիժորը հայտնի կոմպոզիտոր, Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Մ.Մ. Իպպոլիտով-

[15] Նույն տեղում:
[16] «Մշակ», 1904, N 82:
[17] «Մուրճ», 1904, N 5:
[18] **Мамулов С.** Армяне в Грузии. Москва, 1995, стр. 94.
[19] **Гевенян С.**, указ. соч., стр. 96.

Իվանովն էր: Իսայի և Իվան Փիթոյան եղբայրները հավաքել էին ուժեղ դերասանական կազմ, նաև հրավիրում էին հռչակավոր կատարողների՝ Ֆ.Շալյապինին (բեմական գործունեության սկզբնական շրջանում), Մ. Իպպոլիտով-Իվանովին, Վ.Կոմիսարժևսկայային, Ա.Ռուբինշտեյնին: Այստեղ բազմիցս եղել է Պ.Չայկովսկին: 1890թ., երբ Թիֆլիսում տեղի ունեցան Պ.Չայկովսկու հյուրախաղերը, Ի.Փիթոյանը նրան նվիրեց փղոսկրից պատրաստված և ոսկով պատված դիրիժորական փայտիկ: Արտիստական ընկերություն այցելած Պ.Չայկովսկու պատվին տեղի նվագախմբի ուժերով տրվել է համերգ, բացառապես նրա ստեղծագործություններից կազմված նվագացանկով, ինչը զարմացրել է կոմպոզիտորին: Կանոնավոր բեմադրվում էին նաև դրամատիկական ներկայացումներ ռուսաց և հայոց լեզուներով, 1901-ից նաև՝ վրացերենով: Փիթոյանի Արտիստական ընկերության գործունեությունը դիպուկ է բնութագրել Գ.Թումանովը՝ գրելով. «եթե «Դվորցովի» խմբակն ընկալվում էր որպես չինովնիկների ակումբ, «Թիֆլիսյան հավաքները»՝ վաճառականական, ապա «Արտիստական ընկերությունը» միավորում էր բոլոր խավերին, ամբողջ հասարակությանը, բոլոր ազգերին»[20]:

Ի.Փիթոյանը թիֆլիսահայ արդյունաբերող և բանկիր, քաղաքային դումայի «Դվորցովի» խմբակի ղեկավարներից Կոնստանտին Միքայելի Ալիխանյանի հետ Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի և Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի հիմնադիրներից էր[21]: Նա ընտրվեց բաժանմունքի նախագահ, բայց այդ պաշտոնը հանձնեց Կ.Ալիխանյանին[22], որը սովորել էր Ս.Պետերբուրգի կոնսերվատորիայում: Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի առաջին տնօրեն կոմպոզիտոր Մ. Իպպոլիտով-Իվանովը շատ կարճ ժամկետում այն դարձրեց լավագույն երաժշտական ուսումնարաններից մեկը, մտերմացավ Ի.Փիթոյանի հետ և դարձավ նրա խմբակի անդամ: Այդ ուսումնարանի հիմքի վրա հետագայում ստեղծվեց Թիֆլիսի պետական կոնսերվատորիան:

Ի.Փիթոյանը մտերիմ էր հայտնի կոմպոզիտոր և դաշնակահար Ա.Գ.Ռուբինշտեյնի հետ: Թիֆլիս այցելելիս նա հաճախ էր հյուրընկալվում Կոջորում գտնվող Փիթոյանի ամառանոցում: Ա.Ռուբինշտեյնի համար Ի.Փիթոյանը մեծ գումարով գնել էր ռոյալ, որպեսզի դաշնակահարը Կոջորում պարա-

[20] **Туманов Г.**, указ.соч., стр. 112.
[21] Նույն տեղում, էջ 107:
[22] **Гевенян С.,** указ.соч., стр. 94.

պի թիֆլիսյան համերգներին պատրաստվելիս: Այժմ այն Թիֆլիսի կոնսերվատորիայի պարծանքն է և հայտնի է որպես «Ռուբինշտեյնի ռոյալ»[23]: Ա.Ռուբինշտեյնը խնդրել է իրեն համարել Փիթոյանի խմբակի անդամ, իսկ հերթական համերգից հետո վերադարձել է Կոջորի ամառանոց և իր ցանկությամբ Ի.Փիթոյանի ու հյուրերի համար կրկնել ամբողջ համերգային ծրագիրը[24]:

Իսայի Փիթոյանի կրտսեր եղբայրը՝ Իվանը (ծն. և մահ. թթ. անհայտ), նույնպես տարված էր արվեստով: Փարիզից վերադառնալուց հետո անմիջապես ներգրավվեց տեղի թատերական կյանքի մեջ, դարձավ Արտիստական ընկերության թատրոնի տնօրենը: Նա դուրս եկավ ընտանեկան բիզնեսից՝ խնդրելով ավագ եղբորը առանձնացնել իր բաժինն ընդհանուր դրամագլխից: Այդ միջոցներով Իվան Փիթոյանը գանձապետարանից 6 տարով վարձակալության վերցրեց անմխիթար վիճակում գտնվող պետական թատրոնը (ներկայիս Զ.Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական թատրոնը)՝ վերակառուցելով, վերանորոգելով և ընդարձակելով այն: Նա հրավիրեց ճանաչված դերասանների և կատարողների, ուժեղացրեց նվագախմբի և երգչախմբի կազմերը՝ չստանալով ոչ մի աջակցություն պետությունից: Օպերային թատրոնի առաջին դիրիժորը Մ.Իպպոլիտով-Իվանովն էր: Վեց տարի անց՝ 1886թ., նա թատրոնը, որտեղ ներդրել էր իր ողջ կարողությունը, վերադարձրեց պետությանը՝ շարունակելով վարձատրությամբ աշխատել որպես գլխավոր ռեժիսոր:

Օպերային թատրոնը պետությանը վերադարձնելուց հետո՝ ընդամենը մեկ տարվա ընթացքում, ի հայտ եկան կազմակերպչական և նյութական դժվարություններ: Թիֆլիսի նահանգի գլխավոր հրամանատար իշխան Դանդուկով-Կորսակովի խնդրանքով Իսայի Փիթոյանը թատրոնը վերցրեց վարձակալությամբ՝ հոգալով ֆինանսական բոլոր ծախսերը: Նա 50 հազար ռուբլի հատկացրեց՝ օպերային թատրոնի պարտքերը մարելու համար: Չորս տարի՝ 1887-1891թթ., նա համատեղեց օպերային թատրոնի տնօրենի պաշտոնը Արտիստական ընկերության ղեկավարի գործունեության հետ, այնուհետև թատրոնի ղեկավարումը հանձնեց Արտիստական ընկերության վարչության ավագ Պ.Ա.Օպոչինինին[25]:

Ի.Փիթոյանը նպաստել է նաև հայ թատրոնի զարգացմանը, եղել է Թիֆ-

[23] **Мамулов С.,** указ.соч., стр. 242.
[24] **Гевенян С.**, указ.соч., стр. 98.
[25] Նույն տեղում, էջ 96-99:

լիսի հայկական թատերական կոմիտեի (1897թ.) հիմնադիրներից[26]: 1902թ. նրա մասնակցությամբ հիմնադրվել է Հայկական դրամատիկական ընկերությունը[27], որի կազմակերպիչներից էին դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը և իշխանուհի Մարիամ Թումանյանը:

Ի.Փիթոյանի տնային թատրոնը չնայած վերակառուցվել և ընդարձակվել էր, այլևս չէր բավարարում Արտիստական ընկերության աճող պահանջները: Փիթոյանը որոշեց կառուցել նոր շենք և դրա համար ծախսեց 1.5 մլն ռուբլի: Նրա հրավերով թատրոնի նոր շենքի նախագծման աշխատանքներին սկզբում մասնակցում էին ճանաչված ճարտարապետներ Վ.Տատիշչևը և Ի.Շիմկևիչը, բայց այն ավարտին հասցրեց միայն Ի.Շիմկևիչը: 1901թ. փետրվարի 6-ին տեղի ունեցավ Արտիստական ընկերության նոր շենքի հանդիսավոր բացումը, որը Թիֆլիսում հայտնի էր «Փիթոևի տուն» անունով (1921թ.-ից՝ Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոն): Գոլովինյան փողոցում վեր խոյացած «հոյակապ շինությունը»[28], որը Թիֆլիսի գեղեցկագույն ճարտարապետական կառույցներից է, կառուցված է ուշ բարոկկոյի ոճով: Ուներ 810 տեղանոց դահլիճ, իսկ արտաքին ու ներքին հարդարման աշխատանքների համար հրավիրվել էին իտալացի լավագույն վարպետները: Ժամանակի նորագույն տեխնիկական միջոցներով, լուսավորության, օդափոխման, ջեռուցման սարքավորումներով հագեցած թատրոնի ամբողջ կահույքը, գորգերը, կանթեղները, ջահերը և այլն, բերվել էին Եվրոպայից և հատուկ պատվերով պատրաստված էին միակ օրինակներով[29]: Այստեղ սկսեց գործել նաև վրացական թատերախումբ: Այն շքեղ նվեր էր Թիֆլիսին, որը դարձավ մշակույթի իսկական կենտրոն, ժամանակի մամուլի բնորոշմամբ «արվեստի տաճար»՝ գեղեցիկ ճարտարապետական արտաքինով և ներքին հարուստ բովանդակությամբ:

Ի.Փիթոյանը մտադիր էր կառուցել նաև ամառային թատրոն, բայց չհասցրեց իրականացնել այն: Նա մահացավ Արտիստական ընկերության նոր շենքի բացումից երեք տարի անց՝ 1904թ. ապրիլի 22-ին: Աճյունն ամփոփվել է Խոջիվանքի հայկական գերեզմանատանը: Շիրիմը չի պահպանվել, ինչպես և չի պահպանվել գեթ մեկ հիշատակություն, նրա անունով փողոց, Արտիստա-

[26] ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 335:
[27] «Մշակ», 1904, N 82:
[28] Նույն տեղում:
[29] **Саргсян Р.** Армяне-благотварители Тифлиса (вторая половина XIX в.) // ՊԲՀ, 2011, N 2, стр. 156.

կան ընկերության կամ օպերային թատրոնի շենքերում որևէ հուշատախտակ՝ նվիրված Թիֆլիսի հայտնի, օրինավոր, հումանիստ և մեկենաս քաղաքացի Իսայի Փիթոյանին, իսկ Սոլոլակի նրա տունը ոչնչով չի հիշեցնում նախկին տերերի մասին:

Իսայի և Իվան Փիթոյանների ժառանգները նույնպես իրենց կյանքը կապեցին թատրոնի հետ՝ դառնալով ճանաչված դերասաններ և թատերական գործիչներ: Իսայի Փիթոյանի դուստրը դարձավ դերասանուհի, բայց ամենամեծ հաջողությունների հասավ Իվան Փիթոյանի որդին՝ Ժորժ (Գեորգի) Փիթոյանը (1884-1939թթ.), որի կինը՝ Լյուդմիլա Փիթոյանը (օրիորդական ազգանունը՝ Սմանովա), նույնպես դերասանուհի էր: 1905թ. Իվան Փիթոյանի ընտանիքը (կինը՝ Լիդիան, Բեհբուդյանների իշխանական տոհմից էր) տեղափոխվեց Փարիզ: Ժորժ Փիթոյանը Եվրոպայում հռչակվեց իր բեմադրություններով և դերասանական խաղով: 1916թ., երբ բնակվում էր Շվեյցարիայում, Ժնևի թատրոնում բեմադրեց Նահապետ Քուչակ՝ Վ.Բրյուսովի թարգմանությամբ[30]: Ժ.Փիթոյանը Փարիզում ղեկավարել է թատերախումբ, եղել է 1920-30-ական թթ. ֆրանսիական թատրոնի խոշորագույն գործիչներից: 1937թ. արժանացել է Ֆրանսիայի Պատվո լեգիոն շքանշանի[31]:

Զարմանալի է Իսայի Փիթոյանի մեծ հակումը և կիրքը թատրոնի հանդեպ: Նա տարբերվում էր վաճառականի ավանդական կերպարից, շատ արդյունավետ համադրում էր ձեռնարկատիրությունն ու արվեստի հովանավորությունը: Ի.Փիթոյանը, մեծ գումարներ ներդնելով ի ծառայություն արվեստի, թելադրեց ճաշակ, ձևավորեց գեղագիտական միջավայր, արմատավորեց բարձրագույն գաղափարների և արժեքների շուրջ հասարակության տարբեր խավերին մեկտեղելու մշակույթ:

ИСАИ ПИТОЯН - ПРОМЫШЛЕННИК, БАНКИР, МЕЦЕНАТ

ВАРДАН ЕСАЯН

Представители дворянского рода Питоянов в Тифлисской губернии и на Южном Кавказе известны не только как промышленники, купцы и банкиры, но и как любители искусства, меценаты, оказавшие значительное влияние на развитие театрального и музыкального искусства Кавказа.

---

[30] **Гевенян С.**, указ.соч., стр. 102, 103.
[31] ՀՍՀ, h. 12, էջ 335:

Самый известный представитель рода Питоянов, глава семейного бизнеса, Исаи Питоян – рыбопромышленник, нефтепромышленник, банкир, а также, уважаемый общественный деятель, который не жалел средств для искусства. Основанное им Актерское товарищество стало беспрецедентным культурным центром Тифлиса, собрав вокруг себя известных деятелей искусства и все общество.

Ключевые слова **–** рыбная промышленность, нефтяная промышленность, частный банк, пароходное товарищество, городская дума, меценат, театральный кружок, Актерское товарищество.

ISAYI PITOYAN: THE INDUSTRIALIST, BANKER, ART PATRON

VARDAN YESAYAN

The Pitoyan aristocratic family were not only famous merchants, industrialists and bankers in Tbilisi province and Transcaucasia, but they were also art lovers and patrons, who significantly contributed to the development of theatrical and musical art in Caucasia.

The most popular representative of the Pitoyan family was Isayi Pitoyan: fishing industrialist, oil miner, banker as well as a respected social worker, who did not save any means for the benefit of art. The Artist company founded by him became an extraordinary cultural center in Tbilisi, bringing together popular artists and the whole society.

Key words – fishing industry, oil mining, private bank, steamboat company, urban duma, art patron, theatrical group, Artist company.